



Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2024 թվականին քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման կանխման ուղղությամբ ձեռնարկված գործողությունների վերաբերյալ

Իրավական նախաձեռնությունների կենտրոնը կարևորում է քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման, ազատագրված անձանց կողմից դրանց պահման և ապօրինի շրջանառության դեպքերի բացահայտման և կանխման ուղղությամբ քրեակատարողական ծառայության կողմից ձեռնարկված գործողությունները:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում 2024 թվականի ընթացքում հայտնաբերված արգելված իրերի վերաբերյալ

	ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ	Բջջային հեռախոս /հատ/	Բջջային հեռախոսի պարզագույն /հատ/	WiFi /հատ/	Կորոզ- ծակող սարքեր /հատ/	Խաղաքարեր /հատ/	Ոգեկից խմիչք /լիտր/	Ինքնաշեն ոգեկից խմիչք /լիտր/	Ինքնաշեն ոգեկից խմիչքի հոմեք /կգ/	Գումար				Թմբակային /գրամ/	Դեղահաք /հատ/	Այլ /արգելված իր/
										ԴՐԱՄ	ՌՈՒՌԵԼԻ	ԴՈՒՍԱՐ	ԵՎՐՈ			
1	«ՆՈՒՐԱՐԱՇԵՆ»	388	350	15	19	551	1,5	515	0	462120	900	0	0	90,95	60	98
2	«ՎԱՆԱՁՈՐ»	130	131	0	37	493	0	167	11,5	152150	20000	100	0	57,8	6	104
3	«ՎԱՐԴԱՇԵՆ»	110	124	0	10	176	7,83	2,4	25	0	0	0	0	0	17	8
4	«ԵՐԵՎԱՆ-ԿԵՆՏՐՈՆ»	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	0,8	0	0
5	«ԳՈՐԻՍ»	67	104	1	10	136	0	92,45	1,008	0	0	0	0	85,08	0	29
6	«ԱՐԹԻԿ»	109	109	5	4	172	0	144,5	5	0	50	204	0	3,9619	10	10
7	«ՍԵՎԱՆ»	172	245	0	29	293	0	322,1	9	300	0	0	0	645,413	67	167
8	«ԱՐՈՎԱՅԱՆ»	5	10	0	2	108	0	0	0	18000	0	0	100	0	0	2
9	«ԴԱՏ.ՀԻՎԱՆԴԱՆՈՑ»	56	72	1	76	32	0	66,75	1	4440	0	0	0	30,87	206	55
10	«ԱՐՄԱՎԻՐ»	819	709	106	217	1392	10,68	660	19,5	422230	0	700	0	633,669	62	308
Ընդամենը		1856	1854	128	404	3353	20,01	1970,2	72,008	1059240	20950	1004	100	1548,54	428	781

Ուսումնասիրելով քրեակատարողական ծառայության կողմից 2024 թվականին կատարված 70-ից ավելի պաշտոնական հրապարակումները և գրավոր հարցման միջոցով տրամադրված պաշտոնական պարզաբանումները՝ հանգել ենք այն եզրակացության, որ դեռևս արդյունավետ չեն քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման ուղիների բացահայտման և կանխարգելման ուղղությամբ ձեռնարկված գործողությունները: Թերևս դա է պատճառը, որ շարունակվում են արգելված իրեր հայտնաբերվել քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներում, մասնավորապես՝ խցերում, կացարաններում և այլ տարածքներում: Առավել մտահոգիչ է արգելված իրերի պահպանման նպատակով քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներում պատրաստված թաքստոցների առկայությունը:

Ըստ պաշտոնական պարզաբանման՝ Քրեակատարողական ծառայության կողմից առանձնացված վիճակագրությունն չի վարվում այն մասին, թե արգելված իրերի քանի տոկոսն է բացահայտվել քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներում իրականացված խուզարկությունների արդյունքում: Մակայն Քրեակատարողական ծառայության կայքէջում 2024 թվականի ընթացքում 11 պաշտոնական հրապարակում է կատարվել նշված եղանակով արգելված իրերի հայտնաբերման վերաբերյալ: Ըստ 2 հրապարակման՝ արգելված իրեր հայտնաբերվել և առգրավվել են քրեակատարողական բոլոր հիմնարկներում՝ Քրեակատարողական ծառայության պետի հրամանով¹ և հանձնարարությամբ² ձեռնարկված բազմաբնույթ միջոցառումների արդյունքում: Մյուս դեպքերում արգելված իրերը հայտնաբերվել և առգրավվել են խուզարկությունների արդյունքում: Ըստ այդմ, արգելված իրեր են հայտնաբերվել և առգրավվել «Նուբարաշեն» ՔԿՀ-ի խցերում³, «Սևան» ՔԿՀ-ի կացարաններից մեկի թաքստոցում⁴, նույն հիմնարկի բնակելի գոտու մասնաշենքերից մեկի հետնամասում գտնվող տաղավարի տանիքում պատրաստված թաքստոցում⁵, նույն հիմնարկի կացարաններում և բնակելի գոտու այլ հատվածներում⁶, «Արմավիր» ՔԿՀ-ի խցերից մեկում⁷, նույն հիմնարկի տարբեր խցերում⁸, «Վանաձոր» ՔԿՀ-ի զբոսահրապարակի հարակից տարածքում⁹: Ըստ հերթական հրապարակման՝ «Վանաձոր» ՔԿՀ-ում զանգվածային խուզարկություններ են իրականացվել այն բանից հետո, երբ օպերատիվ տեղեկատվություն է ստացվել խցերում պահվող արգելված իրերի մասին¹⁰: Ըստ մեկ այլ հրապարակման՝ «Սևան» ՔԿՀ-ի մասնաշենքերից մեկի հարակից տարածքում տեղադրված աղբամանների մոտ պատրաստված թաքստոցում արգելված իրերը հայտնաբերվել և առգրավվել են դարձյալ ստացված օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում¹¹:

«Արմավիր» ՔԿՀ-ն ապահովված է տեսահսկման համակարգով, սակայն մտահոգիչ է այն, որ վերջինիս խցերում նույնպես արձանագրվել են արգելված իրերի պահման դեպքեր: Առավել մտահոգիչ է այն, որ, ինչպես նկարագրված է վերջին 2 հրապարակումներում, «Վանաձոր» և «Սևան» ՔԿՀ-ների բնակելի գոտիներում արգելված իրերի հայտնաբերման և առգրավման նպատակով իրականացված խուզարկությունների համար հիմք են հանդիսացել նախապես ստացված օպերատիվ տեղեկությունները: Դա թույլ է տալիս ենթադրել, որ առկա են լուրջ թերացումներ քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած անձանց, այդ թվում՝ ազատագրված անձանց զննության, անհրաժեշտության դեպքում՝ անձնական խուզարկության անցկացման, իսկ «Արմավիր» ՔԿՀ-ում նաև արդյունավետ տեսահսկման իրականացման հարցում:

Հետևաբար կարծում ենք, որ անհրաժեշտ է «Արմավիր» ՔԿՀ-ում բարձրացնել տեսահսկման արդյունավետությունը, քրեակատարողական բոլոր հիմնարկների բնակելի գոտիներում խստացնել

¹ Ուժեղացված ծառայություն՝ քրեակատարողական հիմնարկներում, հղում՝ <https://www.penitentiary.am/news/h-04-01>:

² Քրեակատարողական հիմնարկներում խուզարկությամբ հայտնաբերվել են բջջային հեռախոսներ և այլ արգելված իրեր, հղում՝ <https://www.penitentiary.am/news/30-04-2024>:

³ Հատուկ միջոցառումներ՝ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում, հղում՝ <https://www.penitentiary.am/news/n-10-01>:

⁴ «Սևան» ՔԿՀ-ի կացարաններից մեկի թաքստոցից հայտնաբերել են բջջային հեռախոսներ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/sevan-16-01-23-->:

⁵ «Սևան» ՔԿՀ-ի ծառայողները տաղավարի տանիքում պատրաստված թաքստոցից հայտնաբերել են թմրամիջոցի նմանվող, խոշոր չափերի զանգվածներ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/s-30-01>:

⁶ «Սևան» ՔԿՀ-ում իրականացվել են համալիր միջոցառումներ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/sevan-qkh-13-02-24-->:

⁷ Թմրանյութին նմանվող զանգված, ոգելից խմիչք և այլ արգելված իրեր՝ «Արմավիր» ՔԿՀ-ի խցերից մեկում, հղում՝ <https://www.penitentiary.am/news/arm-oper-14-02-24-->:

⁸ Մեծածավալ միջոցառումներ՝ «Արմավիր» ՔԿՀ-ում, հղում՝ <https://www.penitentiary.am/news/19-04-24>:

⁹ «Վանաձոր» ՔԿՀ-ի ծառայողները ծխախոտի տուփից հայտնաբերել են թմրամիջոցի նմանվող զանգվածներ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/30-09-2024>:

¹⁰ Չանգվածային խուզարկություններ՝ «Վանաձոր» ՔԿՀ-ում, հղում՝ <https://www.penitentiary.am/news/vanadzor-12-02-24-->:

¹¹ «Սևան» ՔԿՀ-ում ծառայողները հայտնաբերել են մեծ քանակությամբ արգելված իրեր և կակադեղի զանգվածներ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/06-09-2024>:

հսկողությունը, և, որ ամենակարևորն է, պատշաճ ձևով կատարել քրեակատարողական հիմնարկներ մուտք գործած անձանց, այդ թվում՝ ազատազրկված անձանց գնությունը, անհրաժեշտության դեպքում՝ անձնական խուզարկությունը:

Մտահոգիչ է քրեակատարողական ծառայողների և աշխատողների, ինչպես նաև Քրեակատարողական բժշկության կենտրոնի բուժաշխատողների կողմից քրեակատարողական հիմնարկներ արգելված իրեր ներս տանելու պրակտիկան: Ծիշտ է, առկա չէ առանձնացված վիճակագրություն այն մասին, թե նշված եղանակով քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ արգելված իրեր ներս տանելու քանի դեպք է արձանագրվել: Սակայն Քրեակատարողական ծառայության 2024 թվականի պաշտոնական հրապարակումների ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ ազատազրկված անձանց փոխանցվելիք արգելված իրերի հայտնաբերման և առգրավման 4 դեպք արձանագրվել է «Արմավիր» ՔԿՀ-ում՝ նույն հիմնարկի անվտանգության ապահովման բաժնի առաջատար մասնագետի¹² և անվտանգության ապահովման բաժնի ծառայողի¹³ խուզարկության, անվտանգության ապահովման բաժնի 3-րդ կարգի մասնագետի համագետի պարանոցային հատվածի խուզարկության¹⁴, տնտեսական մասի պայմանագրային աշխատողի մոտ առկա էլեկտրական շաղափիչի գնություն¹⁵ և տեխնիկատնտեսական սպասարկման աշխատանքներում ներգրավված՝ սնունդ բաժանող դատապարտյալների խուզարկության¹⁶ արդյունքում, 1-ական դեպքեր «Վանաձոր», «Դատապարտյալների հիվանդանոց» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում՝ Քրեակատարողական բժշկության կենտրոնի՝ համապատասխանաբար «Վանաձոր» ստորաբաժանման բուժքրոջ գնություն¹⁷, «Դատապարտյալների հիվանդանոց» ստորաբաժանման բուժքրոջ անձնական իրերի խուզարկության¹⁸ և «Նուբարաշեն» ստորաբաժանման բուժակի խուզարկության¹⁹ արդյունքում, և 1 դեպք «Վարդաշեն» ՔԿՀ-ում՝ ազատազրկված անձանց ծառայություններ մատուցելու նպատակով հիմնարկ այցելած վարսավիրի խուզարկության²⁰ արդյունքում: Ընդ որում, բացառությամբ սննդի համար նախատեսված սայրակում հայտնաբերված արգելված իրի, մնացած բոլոր դեպքերում առկա են եղել ազատազրկված անձանց փոխանցելու նպատակով քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներթափանցման վերաբերյալ նախապես ստացված օպերատիվ տեղեկություններ:

Այս հարցում մեր մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ յուրաքանչյուր մուտքի դեպքում քրեակատարողական ծառայողների և աշխատակիցների, ինչպես նաև Քրեակատարողական բժշկության կենտրոնի բուժանձնակազմի շրջանում գնություն, անհրաժեշտության դեպքում՝ անձնական խուզարկություն կատարել՝ անկախ նրանից՝ առկա են օպերատիվ տեղեկություններ, թե՛ ոչ: Բացի այդ, անհրաժեշտ է ֆիքսված

¹²Պաշտոնական դիրքի չարաչափում. ձերբակալվել է «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողը, հղում <https://www.penitentiary.am/news/arm-gkh-12-02-24--op->:
¹³Քրեակատարողական ծառայության կողմից բացահայտվել է կոռուպցիոն դրսևորման հեթական դեպքը. ձերբակալվել է «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայող, հղում <https://www.penitentiary.am/news/-26-2-24-arm-gkh->:
¹⁴Քրեակատարողական ծառայության օպերատիվ վարչության աշխատակիցները ձերբակալել են «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողին, հղում <https://www.penitentiary.am/news/18-11-2024>:
¹⁵Քրեակատարողական ծառայողները կանխել են պայմանագրային աշխատողի միջոցով թմրանյութի ներթափանցումը հիմնարկ, հղում <https://www.penitentiary.am/news/27-06-24>:
¹⁶Սնունդ բաժանող դատապարտյալը հացերի մեջ թաքցրել էր բջջային հեռախոս և wi-fi սարք, հղում <https://www.penitentiary.am/news/08-11-2024>:
¹⁷«Վանաձոր» ՔԿՀ-ում ՀՀ առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բուժքույրը փորձել է բջջային հեռախոսներ և այլ արգելված իրեր փոխանցել, հղում <https://www.penitentiary.am/news/15-04-2024>:
¹⁸«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում ՀՀ առողջապահության նախարարության «Քրեակատարողական բժշկության կենտրոն» ՊՈԱԿ-ի բուժքրոջ մոտից հայտնաբերվել են թմրամիջոցի նմանվող զանգված և դեղահաբեր, հղում <https://www.penitentiary.am/news/12-09-2024>:
¹⁹Որոշ անձինք փորձել են օգտվել Քրեակատարողական ծառայողի օրվա հետ կապված տոնական և նախատոնական իրավիճակներից, հղում <https://www.penitentiary.am/news/21-10-24>:
²⁰«Վարդաշեն» ՔԿՀ այցելած վարսավիրի մոտից ծառայողները հայտնաբերել են թաքցրած բջջային հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/0509-24>:

աշխատանքային հեռախոսային ցանցից բացի շարժական աշխատանքային հեռախոսային ցանց տեղադրել, ինչը կբացառի նշված մասնագիտական խմբերի կողմից քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ սեփական օգտագործման բջջային հեռախոսներ ներս տանելու պրակտիկան: Ինչ վերաբերում է բուժանձնակազմին, ապա անհրաժեշտ է նրանց ըստ անհրաժեշտության լուսանկարչական սարքեր տրամադրել, ինչը կբացառի ազատազրկված անձանց շրջանում մարմնական վնասվածքներն արձանագրելու պատրվակով սեփական օգտագործման բջջային հեռախոսները քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ ներս տանելու պրակտիկան: Նշվածի համատեքստում միայն հնարավոր կլինի բացառել ազատազրկված անձանց բջջային հեռախոսների և արգելված այլ իրերի վաճառքի պրակտիկան:

Կարևոր է նաև, որպեսզի արգելված իրերի հայտնաբերման և առգրավման գործընթացի նկատմամբ պատշաճ վերահսկողություն իրականացվի, որպեսզի հրապարակվեն հայտնաբերված արգելված իրերի իրական թվերը, ինչը հիմք կտա բացառել չհրապարակված արգելված իրերի վերավաճառքը քրեակատարողական մյուս հիմնարկներում պահվող ազատազրկված անձանց:

Մտահոգիչ է նաև քրեակատարողական հիմնարկներ արգելված իրերի ներնետման պրակտիկան: Ճիշտ է, դարձյալ առկա չէ առանձնացված վիճակագրություն այն մասին, թե արգելված իրերի քանի տոկոսն է բացահայտվել քրեակատարողական հիմնարկների բնակելի գոտիներ կատարված ներնետումների միջոցով: Սակայն Քրեակատարողական ծառայության պաշտոնական հրապարակումների ուսումնասիրության արդյունքում պարզել ենք, որ 2024 թվականին ներնետման 2 դեպք է արձանագրվել «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում²¹, 1-ական դեպքեր՝ «Վանաձոր»²² և «Նուբարաշեն»²³ ՔԿՀ-ներում, 6 դեպք՝ «Սևան» ՔԿՀ-ում²⁴: Նշվածից ակնհայտ է դառնում, որ ներնետման փորձեր, այդ թվում՝ անօդաչու սարքերի միջոցով, առավել հաճախ կատարվում են «Սևան» ՔԿՀ-ում: Բացի այդ, «Վանաձոր» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներ ներնետման 1-ական դեպքերը և «Սևան» ՔԿՀ ներնետման 5 դեպքը հնարավոր է եղել բացահայտել նախապես ստացված օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում:

Այս առումով կարծում ենք, որ անհրաժեշտ է դիտարկել քրեակատարողական հիմնարկներն արտաքին տեսահսկման սարքավորումներով սպահովելու, ինչպես նաև քրեակատարողական հիմնարկների դիտաշտարակները վերազինելու և տեսահսկման սարքավորումներով համալրելու հարցը՝ հատուկ ուշադրություն դարձնելով «Սևան» ՔԿՀ-ին:

Նույնքան մտահոգիչ է ազատազրկված անձանց քաղաքացիական բժշկական կենտրոններում արգելված իրերի փոխանցման պրակտիկան: Այս դեպքում նույնպես առկա չէ առանձնացված վիճակագրություն այն մասին, թե արգելված իրերի քանի տոկոսն է բացահայտվել քաղաքացիական բժշկական կենտրոններից քրեակատարողական հիմնարկներ տեղափոխված ազատազրկված անձանց զննության կամ անձնական խուզարկության արդյունքում: Սակայն Քրեակատարողական ծառայության 2024 թվականի պաշտոնական հրապարակումների ուսումնասիրությամբ պարզել ենք, որ ազատազրկված անձանց քաղաքացիական բժշկական կենտրոններում արգելված իրերի

²¹ «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում արձանագրվել է ներնետման երկու դեպք, հղում՝ <https://www.penitentiary.am/news/dh>:

²² Օպերատիվ տեղեկությունների իրացմամբ հայտնաբերվել է «Վանաձոր» ՔԿՀ ներնետված փաթեթ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/vanadzor-15-02-24-->:

²³ «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ծառայողները կանխել են թմրամիջոցների և արգելված իրերի ներթափանցումը հիմնարկ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/n-12-06>:

²⁴ Անօդաչու թռչող սարքի միջոցով փորձ է արվել փոխանցել արգելված իրեր «Սևան» ՔԿՀ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/10.04.2024>: ԱԹՍ-ի միջոցով փաթեթ է ներնետվել «Սևան» ՔԿՀ, հղում՝ <https://www.penitentiary.am/news/20-05-2024>: «Սևան» ՔԿՀ ծառայողների արագ արձագանքի շնորհիվ կանխվել է արգելված իրերի փոխանցումը դատապարտյալներին, հղում՝ <https://www.penitentiary.am/news/14-08-2024>: Քրեակատարողական ծառայողները հայտնաբերել են հերթական ներնետված փաթեթը, հղում՝ <https://www.penitentiary.am/news/20-08-24>: Քրեակատարողական ծառայողները կանխել են ներնետման միջոցով արգելված իրերի փոխանցումը, հղում՝ <https://www.penitentiary.am/news/0909-2024>: Որոշ անձինք փորձել են օգտվել Քրեակատարողական ծառայողի օրվա հետ կապված տոնական և նախատոնական իրավիճակներից, հղում՝ <https://www.penitentiary.am/news/21-10-24>:

փոխանցման վերաբերյալ 8 հրապարակում է կատարվել: Ըստ այդմ, արգելված իրեր են հայտնաբերվել և առգրավվել «Արթիկ» բժշկական կենտրոնից «Արթիկ» ՔԿՀ վերադարձած կալանավորված անձի անձնական խուզարկության արդյունքում²⁵, «Գյումրի» բժշկական կենտրոնից «Արթիկ» ՔԿՀ տեղափոխված կալանավորված անձի հետ տարված բացատրական աշխատանքների արդյունքում²⁶, «Էջմիածին» բժշկական կենտրոնի սանհանգույցի զննության արդյունքում²⁷, որից ցանկացել է օգտվել «Արմավիր» ՔԿՀ-ից նշված բժշկական կենտրոն տեղափոխված կալանավորված անձը, քաղաքացիական հիվանդանոցներից մեկի բուժզննման սենյակի խուզարկության արդյունքում²⁸, որտեղ «Արմավիր» ՔԿՀ-ից բուժզննության նպատակով տեղափոխվել էր կալանավորված անձը, քաղաքացիական հիվանդանոցներից մեկից «Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ վերադարձած կալանավորված անձի խուզարկության արդյունքում²⁹, ատամնաբուժական կլինիկայից «Վարդաշեն» ՔԿՀ վերադարձված կալանավորված անձի խուզարկության արդյունքում³⁰, բժշկական կենտրոնից «Արմավիր» ՔԿՀ տեղափոխված կալանավորված անձի անձնական խուզարկության արդյունքում³¹ և բժշկական կենտրոնից «Նուբարաշեն» ՔԿՀ վերադարձված կալանավորված անձի անձնական խուզարկության արդյունքում³²: Նշված դեպքերից չորսի պարագայում առկա են եղել նախապես ստացված օպերատիվ տեղեկություններ (հղումներ 25, 28, 29, 32), իսկ 5 հրապարակման մեջ նշված չեն բժշկական կենտրոնների անունները՝ ենթադրաբար դրանց գաղտնիությունը պահպանելու նպատակով:

Այս առումով կարծում ենք, որ Առողջապահության նախարարությունը և Արդարադատության նախարարությունը պետք է համատեղեն ջանքերը՝ ազատագրված անձանց պահպանությունը քաղաքացիական բժշկական կենտրոններում ամրապնդելու և այլ անձանց հետ տեսակցություններն ու այդ եղանակով արգելված իրերի փոխանցումները բացառելու, ինչպես նաև ազատագրված անձանց քաղաքացիական բժշկական կենտրոններում փոխացվելիք արգելված իրերը թաքցնելու փորձերը բացահայտելու և կանխարգելելու ուղղությամբ:

Նաև անհրաժեշտ է քաղաքացիական բժշկական կենտրոններից յուրաքանչյուր վերադարձի դեպքում, ազատագրված անձանց շրջանում զննություն և անձնական խուզարկություն կատարել՝ արգելված իրերը բացահայտելու և քրեակատարողական հիմնարկներ դրանց ներթափանցումը կանխելու նպատակով՝ անկախ նրանից՝ առկա են նախապես ստացված օպերատիվ կամ այլ բնույթի տեղեկություններ, թե՛ ոչ:

Ազատագրված անձանց տեսակցության եկած անձանց կողմից կամ նրանց համար բերված հանձնուքների միջոցով արգելված իրերի ներթափանցման պրակտիկան նույնպես մտահոգիչ է: Այս դեպքում ևս առկա չէ առանձնացված վիճակագրություն այն մասին, թե արգելված իրերի քանի տոկոսն

²⁵«Արթիկ» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ի ների ծառայողները կալանավորված անձանց մոտից հայտնաբերել են թաքցված բջջային հեռախոսներ, հղում <https://www.penitentiary.am/news/art-nub-23-24-->:

²⁶Բժշկական կենտրոնից ՔԿՀ վերադարձված կալանավորված անձի մոտ հայտնաբերվել է բջջային հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/02-08-2024->:

²⁷«Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողները կանխել են կալանավորված անձին կասկածելի փաթեթների փոխանցման փորձը բժշկական կենտրոնում, հղում <https://www.penitentiary.am/news/arm-23-01-24-->:

²⁸Բուժզննման սենյակում հայտնաբերվել են կասկածելի զանգվածներ՝ նախատեսված կալանավորված անձի համար, հղում <https://www.penitentiary.am/news/31-05->:

²⁹Քաղաքացիական հիվանդանոցից վերադարձված կալանավորված անձի գոտկատեղից քրեակատարողական ծառայողները հայտնաբերել են թաքցված բջջային հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/19.09.24>:

³⁰«Վարդաշեն» ՔԿՀ-ի ծառայողներն ատամնաբուժարանից վերադարձված կալանավորված անձի մոտից հայտնաբերել են թաքցված բջջային հեռախոսներ, հղում <https://www.penitentiary.am/news/09-10-2024>:

³¹Բժշկական կենտրոնից հիմնարկ տեղափոխված կալանավորված անձի մոտից հայտնաբերվել է թմրամիջոց, հղում <https://www.penitentiary.am/news/10-10-24>:

³²Կանխվել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավորված անձի կողմից թմրամիջոցների և արգելված իրերի ներթափանցումը հիմնարկ, հղում <https://www.penitentiary.am/news/07-11-2024>:

Է բացահայտվել ազատագրված անձանց տեսակցության եկած անձանց զննության կամ անձնական խուզարկության, նրանց համար բերված հանձնուքների զննության արդյունքում: Սակայն Քրեակատարողական ծառայության 2024 թվականի պաշտոնական հրապարակումների ուսումնասիրությամբ պարզել ենք, ազատագրված անձանց տեսակցության եկած անձանց զննության կամ անձնական խուզարկության արդյունքում արգելված իրերի հայտնաբերման 6 դեպք արձանագրվել է «Արմավիր» ՔԿՀ-ում, 2-ական դեպք՝ «Դատապարտյալերի հիվանդանոց» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում, 1-ական դեպքեր՝ «Արթիկ», «Գորիս», «Նուբարաշեն», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում:

Արգելված իրերն «Արմավիր» ՔԿՀ-ում հայտնաբերվել են կալանավորված տարբեր անձանց մոտ կարճատև տեսակցության եկած քաղաքացիների անձնական զննության³³, զննության³⁴, խուզարկության³⁵ և բացատրական աշխատանքի³⁶ արդյունքում: Ընդ որում, վերջին 3 դեպքում առկա են եղել նախապես ստացված օպերատիվ տեղեկություններ: Հաջորդ 2 դեպքերն առանձնակի մտահոգության տեղիք են տալիս: Մեկում նշվում է, որ կալանավորված անձի մոտ հայտնաբերվել են արգելված իրեր, ինչի համար հիմք են ծառայել դրանք վերջինիս մոտ կարճատև տեսակցության եկած քաղաքացու հույսով փոխանցվելու վերաբերյալ օպերատիվ տեղեկությունները³⁷: Մյուսում նշվում է, որ իրացնելով նախապես ստացված օպերատիվ տեղեկությունները՝ կալանավորված անձի մոտ երկարատև տեսակցությունից հետո խուզարկության արդյունքում հայտնաբերվել են արգելված իրեր³⁸: Մեզ անհանգստացնում է այն, որ տեսակցության եկած անձանց մոտ արգելված իրերի հայտնաբերման ուղղությամբ պատշաճ քայլեր չեն ձեռնարկվել՝ նախքան հիմնարկի բնակելի գոտի ներս մտնելը, փոխարենը դրանք հայտնաբերվել են կալանավորված անձանց մոտ՝ մի դեպքում կարճատև, մյուս դեպքում երկարատև տեսակցությունից հետո, ընդ որում՝ նախապես ստացված օպերատիվ տեղեկությունների իրացման արդյունքում:

«Դատապարտյալների հիվանդանոց» ՔԿՀ-ում արգելված իրերը հայտնաբերվել են կալանավորված անձին կարճատև տեսակցության եկած դասեր խուզարկության³⁹, ինչպես նաև նույն հիմնարկում պահվող մեկ այլ կալանավորված անձին կարճատև տեսակցության եկած քաղաքացու անձնական խուզարկության արդյունքում⁴⁰: «Վանաձոր» ՔԿՀ-ում արգելված իրերը հայտնաբերվել են կալանավորված անձին տեսակցության եկած քաղաքացու խուզարկության⁴¹ և կալանավորված անձի խուզարկության արդյունքում⁴² արդյունքում: Ընդ որում, վերջին դեպքում խուզարկությունը կատարվել է տեսակցությունից հետո՝ իրացնելով նախապես ստացված օպերատիվ տեղեկություններն առ այն, որ տեսակցության եկած քաղաքացիները թմրամիջոց են փոխանցելու

³³ «Արմավիր» ՔԿՀ-ում կանխվել է թմրանյութի նմանվող զանգվածների փոխանցումը կալանավորված անձին, հղում <https://www.penitentiary.am/news/arm-oper-09-02-24->:

³⁴ Ծառայողները կանխել են առանձնապես խոշոր չափերի թմրամիջոցների ներթափանցումը «Արմավիր» ՔԿՀ, հղում <https://www.penitentiary.am/news/a11-05->:

³⁵ Ձերբակալվել է «Արմավիր» ՔԿՀ-ի կալանավորված անձին տեսակցության եկած քաղաքացին, հղում <https://www.penitentiary.am/news/armoper200324->:

³⁶ Հերոին տեսակի թմրամիջոցին նմանվող զանգված՝ «Արմավիր» ՔԿՀ տեսակցության եկած քաղաքացու մոտ, հղում <https://www.penitentiary.am/news/17-05-2024->:

³⁷ «Արմավիր» ՔԿՀ-ի կալանավորված անձին փոխանցված թմրամիջոցների նմանվող զանգվածները հայտնաբերվել են, հղում <https://www.penitentiary.am/news/armavir140324->:

³⁸ Կալանավորված անձի ժամացույցի միջից հայտնաբերվել է հերոինի նմանվող զանգված, հղում <https://www.penitentiary.am/news/30-08-24->:

³⁹ Դուստորը փորձել է բջջային հեռախոս փոխանցել ազատագրված հորը, հղում <https://www.penitentiary.am/news/30-01->:

⁴⁰ Կալանավորված անձին տեսակցության եկած քաղաքացու կոշիկի միջատակից հայտնաբերվել է բջջային հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/dat-hiv-02-02-24->:

⁴¹ Քրեակատարողական ծառայողների համատեղ միջոցառումների արդյունքում կանխվել է արգելված իրերի ներթափանցումը «Վանաձոր» ՔԿՀ, հղում <https://www.penitentiary.am/news/vana-04-03-24->:

⁴² Քաղաքացին մարմնում թաքցված թմրամիջոցը փոխանցել է կալանավորված անձին. «Վանաձոր» ՔԿՀ-ի ծառայողները կարճատև տեսակցությունից հետո կալանավորված անձի մոտից առգրավել են թմրամիջոցը, հղում <https://www.penitentiary.am/news/30.11.24->:

կալանավորված անձին: Նշվածից դարձյալ բխում է, որ տեսակցության եկած անձանց մոտ արգելված իրերի հայտնաբերման ուղղությամբ պատշաճ քայլեր չեն ձեռնարկվել՝ նախքան հիմնարկի բնակելի գոտի ներս մտնելը:

«Արթիկ», «Նուբարաշեն», «Սևան» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում արգելված իրերը հայտնաբերվել են համապատասխանաբար կալանավորված անձին երեխայի հետ երկարատև տեսակցության կնոջ իրերի զննության⁴³, դատապարտյալին կարճատև տեսակցության եկած քաղաքացու խուզարկության⁴⁴, դատապարտյալին կարճատև տեսակցության եկած քաղաքացու անձնական խուզարկության⁴⁵ և կալանավորված անձին կարճատև տեսակցության եկած քաղաքացու անձնական խուզարկության⁴⁶ արդյունքում: Ընդ որում, «Արթիկ» ՔԿՀ-ից բացի մնացած բոլոր դեպքերում արգելված իրերի հայտնաբերման համար հիմք են ծառայել նախապես ստացված օպերատիվ տեղեկությունները: Ինչ վերաբերում է «Գորիս» ՔԿՀ-ին, ապա այնտեղ արգելված իրը՝ թմրանյութը, հայտնաբերվել է կարճատև տեսակցության ժամանակ քաղաքացու կողմից հիմնարկում պահվող կալանավորված անձին փոխանցված թզբեխի մեջ⁴⁷, ինչը հիմք է տալիս ենթադրելու, որ տեսակցությունից առաջ քաղաքացու անձնական իրերը պատշաճ զննության չեն ենթարկվել:

Ինչ վերաբերում է ազատագրված անձանց ծանրոցի կամ հանձնուքի միջոցով արգելված իրերի փոխանցմանը, ապա 2024 թվականի պաշտոնական հրապարակումների ուսումնասիրությամբ պարզել ենք, որ նմանատիպ 1-ական դեպքեր են արձանագրվել «Գորիս» և «Վանաձոր» ՔԿՀ-ներում՝ համապատասխանաբար դատապարտյալի անվամբ որպես հանձնուք բերված սառնարանի⁴⁸ և կալանավորված անձի անվամբ արտերկրից ուղարկված ծանրոցի զննություն⁴⁹ արդյունքում: «Արթիկ» ՔԿՀ-ում արձանագրվել է 2 դեպք, արգելված իրերը հայտնաբերվել են կալանավորված անձի մոտ երկարատև տեսակցության եկած կնոջ հանձնուքի⁵⁰ և կալանավորված անձի համար որպես հանձնուք բերված սառնարանի⁵¹ զննության արդյունքում: «Սևան» ՔԿՀ-ում 4 դեպք է արձանագրվել, արգելված իրերը հայտնաբերվել են տարբեր դատապարտյալների անվամբ բերված հանձնուքների զննության արդյունքում⁵²: «Նուբարաշեն» ՔԿՀ-ում արձանագրվել է 5 դեպք, արգելված իրերը հայտնաբերվել են տարբեր կալանավորված անձանց և դատապարտյալների անվամբ բերված հանձնուքների զննության արդյունքում⁵³: «Արմավիր» ՔԿՀ-ում արձանագրվել է 8 դեպք: Արգելված իրերը հայտնաբերվել են

⁴³ «Արթիկ» ՔԿՀ-ի ծառայողները մանկասայլակի մեջ պատրաստված թաքստոցից հայտնաբերել են բջջային հեռախոս և այլ արգելված իրեր, հղում <https://www.penitentiary.am/news/01-11-24>:

⁴⁴ Ձերբակալվել է «Նուբարաշեն» ՔԿՀ-ի դատապարտյալին տեսակցության եկած քաղաքացին, հղում <https://www.penitentiary.am/news/04-04-2024>:

⁴⁵ «Սևան» ՔԿՀ-ի ծառայողները տեսակցող քաղաքացու մարզակոշիկների միջից հայտնաբերել են 20 փաթեթ՝ տարբեր թմրամիջոցների նմանվող զանգվածներով, հղում <https://www.penitentiary.am/news/sevanoperativ>:

⁴⁶ «Վարդաշեն» ՔԿՀ-ի ծառայողները կարճատև տեսակցության եկած քաղաքացու մոտից հայտնաբերել են բջջային հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/30-10-24>:

⁴⁷ Կասկածելի զանգված՝ տեսակցության եկած քաղաքացու թզբեխի միջից, հղում <https://www.penitentiary.am/news/5-6-24>:

⁴⁸ «Գորիս» ՔԿՀ որպես հանձնուք բերված սառնարանի թաքստոցից հայտնաբերվել են 20 բջջային հեռախոս և այլ արգելված իրեր, հղում <https://www.penitentiary.am/news/02-10-2024>:

⁴⁹ «Վանաձոր» ՔԿՀ-ի ծառայողներն արտերկրից ուղարկված ծանրոցում հայտնաբերել են կասկածելի զանգվածներ և արգելված իրեր, հղում <https://www.penitentiary.am/news/21-06>:

⁵⁰ «Արթիկ» ՔԿՀ-ի ծառայողները հայտնաբերել են արգելված իրեր՝ թաքցված մանկական խաղալիքների և հագուստի մեջ, հղում <https://www.penitentiary.am/news/13-8-2024>:

⁵¹ Որոշ անձինք փորձել են օգտվել Քրեակատարողական ծառայողի օրվա հետ կապված տոնական և նախատոնական իրավիճակներից, հղում <https://www.penitentiary.am/news/21-10-24>:

⁵² «Սևան» ՔԿՀ-ի ծառայողները հանձնուքում առկա կիսագույպների վրա հայտնաբերել են ներծծված թմրամիջոց, հղում <https://www.penitentiary.am/news/08-05-2024>: «Սևան» ՔԿՀ-ի ծառայողները կանխել են թմրամիջոցների նմանվող զանգվածների ներթափանցումը հիմնարկ, հղում <https://www.penitentiary.am/news/18-07>: «Սևան» ՔԿՀ-ի ծառայողները բերված կենցաղային էլեկտրատեխնիկայի միջից հայտնաբերել են 26 բջջային հեռախոս և այլ արգելված իրեր, հղում <https://www.penitentiary.am/news/25-07-2024>: 34 բջջային հեռախոս և մեծ քանակությամբ այլ արգելված իրեր՝ «Սևան» ՔԿՀ բերված սառնարանի թաքստոցից, հղում <https://www.penitentiary.am/news/07-11-2024>:

⁵³ «Նուբարաշեն» ՔԿՀ-ում ծառայողների կողմից հայտնաբերվել են հանձնուքի մեջ հնարամտորեն թաքցված, կանեփի յուղին նմանվող զանգվածներ, հղում <https://www.penitentiary.am/news/nub-21-02-24--operativ>: Կասկածելի զանգվածներ՝ ձիթապտուղներում. հանձնուք բերած քաղաքացին

տարբեր կալանավորված անձանց և դատապարտյալների անվամբ բերված հանձնուքների զննության⁵⁴ և խուզարկության⁵⁵ արդյունքում: Ընդ որում, դեպքերի մեծամասնության պարագայում հանձնուքներում թաքցված արգելված իրերը հայտնաբերվել են նախապես ստացված տեղեկությունների իրացման արդյունքում:

Այս հարցում մեր մոտեցումն այն է, որ անհրաժեշտ է տեսակցության եկած յուրաքանչյուր անձի ենթարկել զննության, անհրաժեշտության դեպքում՝ անձնական խուզարկության, ինչպես նաև հանձնուքի ստացման յուրաքանչյուր դեպքում անհրաժեշտ է այն զննության ենթարկել՝ անկախ նրանից՝ կան այդ եղանակով արգելված իրերի ներթափանցման մասին նախապես ստացված օպերատիվ կամ այլ բնույթի տեղեկատվություններ, թե՛ ոչ: Մինչև ժամանակ անհրաժեշտ է բարելավել քրեակատարողական հիմնարկների, այդ թվում՝ հանձնուքների ստացման տարածքների տեխնիկական հագեցվածությունը, ինչը թույլ կտա անհրաժեշտ ծավալով գործողություններ ձեռնարկել արգելված իրերի հայտնաբերման և առգրավման ուղղությամբ: Այս համատեքստում անհրաժեշտ է նաև քայլեր ձեռնարկել համապատասխան ծառայությունների իրականացման համար նախատեսված, այդ թվում՝ քրեակատարողական հիմնարկների պահպանության և անվտանգության ապահովման բաժինների թափուր հաստիքների համալրման ուղղությամբ:

Նշված բաժինների թափուր հաստիքների վիճակագրությունը 2024 թվականի հոկտեմբերի 1 դրությամբ ըստ քրեակատարողական հիմնարկների, հետևյալն է: «Երևան-Կենտրոն» ՔԿՀ-ում պահպանության ապահովման բաժին նախատեսված չէ: «Արթիկ» ՔԿՀ-ում նախատեսված 90 հաստիքները համալրված են: «Աբովյան», «Արմավիր», «Վանաձոր», «Վարդաշեն» ՔԿՀ-ներում նախատեսված համապատասխանաբար 48, 115, 83 և 64 հաստիքներից թափուր են 1-ական հաստիքներ: «Գորիս» և «Նուբարաշեն» ՔԿՀ-ներում նախատեսված համապատասխանաբար 42 և 80 հաստիքներից թափուր են 3-ական, «Դատապարտյալների հիվանդանոց» և «Սևան» ՔԿՀ-ներում՝ նախատեսված համապատասխանաբար 81 և 90 հաստիքներից՝ 4-ական հաստիքներ: Ինչ վերաբերում է անվտանգության ապահովման բաժիններին, ապա «Երևան-Կենտրոն» և «Վարդաշեն» ՔԿՀ-ներում թափուր են նախատեսված համապատասխանաբար 26 և 55 հաստիքներից 1-ական, «Արթիկ» և «Գորիս» ՔԿՀ-ներում՝ նախատեսված համապատասխանաբար 83 և 23 հաստիքներից 2-ական հաստիքներ, իսկ «Վանաձոր», «Սևան», «Աբովյան», «Դատապարտյալների հիվանդանոց», «Արմավիր» ՔԿՀ-ներում՝ համապատասխանաբար նախատեսված 45 հաստիքից 4-ը, 46 հաստիքից 6-ը, 48 հաստիքից 7-ը, 68 հաստիքից 9-ը, 170 հաստիքից 17-ը:

Ինչ վերաբերում է արգելված իրեր, մասնավորապես՝ բջջային հեռախոս հայտնաբերելու արդյունքում հարուցված ծառայողական քննություններին և դրանց ընթացքին, ապա Քրեակատարողական ծառայությունից տեղեկացրել են, որ 2024 թվականի ընթացքում

ձերբակալվել է, հղում <https://www.penitentiary.am/news/nub-oper-22-2-24-->: Հանձնուքից հայտնաբերվել են կասկածելի դեղահաբեր. «Նուբարաշեն» ՔԿՀ-ի կալանավորված անձին հանձնուք բերած քաղաքացուհին ձերբակալվել է, հղում <https://www.penitentiary.am/news/18.07.24>: Հանձնուքով բերված շոկոլադե կոնֆետներում հայտնաբերվել են թմրանյութի նմանվող զանգվածներ, հղում <https://www.penitentiary.am/news/2-9-24>: Որոշ անձինք փորձել են օգտվել Քրեակատարողական ծառայողի օրվա հետ կապված տոնական և նախատոնական իրավիճակներից, հղում <https://www.penitentiary.am/news/21-10-24>:

⁵⁴ «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալին հանձնուք բերած կնոջ մոտից հայտնաբերվել է աննախադեպ քանակի՝ 180 հատ փաթեթ՝ հերոին տեսակի թմրամիջոցին նմանվող զանգվածներով, հղում <https://www.penitentiary.am/news/09-04-2024>: «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողները հայտնաբերել են հեռուստացույցի մեջ թաքցված հեռախոս, հղում <https://www.penitentiary.am/news/24-06-28>: «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողները հայտնաբերել են նվազարկիչում թաքցված բջջային հեռախոս և 10 բաժանորդային քարտ, հղում <https://www.penitentiary.am/news/27-08-2024>: «Արմավիր» ՔԿՀ-ի ծառայողները հայտնաբերել են պիստակներում թաքցված թմրամիջոցի նմանվող զանգվածներ, հղում <https://www.penitentiary.am/news/0-1-11-2024>: «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալի համար բերված աղցաններում հայտնաբերվել են թմրամիջոցներ. հանձնուք բերած կինը ձերբակալվել է, հղում <https://www.penitentiary.am/news/2-2-11-2024>:

⁵⁵ «Արմավիր» ՔԿՀ-ում ձերբակալվել է կալանավորված անձին հանձնուք բերած տաքսու վարորդը, հղում <https://www.penitentiary.am/news/10-04-2024>: «Արմավիր» ՔԿՀ-ի դատապարտյալին բերված հանձնուքում հայտնաբերվել է կրակայրիչ՝ լցված թմրամիջոցի նմանվող հեղուկով, հղում <https://www.penitentiary.am/news/12-04-2024>: «Արմավիր» ՔԿՀ-ի կալանավորված անձի համար նախատեսված հանձնուքում հայտնաբերվել է թմրանյութին նմանվող հեղուկ զանգված, հղում <https://www.penitentiary.am/news/23-04-2024>:

քրեակատարողական հիմնարկներում պահվող ազատագրկված անձանց մոտ բջջային հեռախոսների հայտնաբերման վերաբերյալ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ներքին անվտանգության բաժնում նշանակվել է 3 ծառայողական քննություն, ինչի արդյունքում 7 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ: Այլ արգելված իրերի հայտնաբերման վերաբերյալ Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ներքին անվտանգության բաժնում նշանակվել է 6 ծառայողական քննություն, որից 4-ի արդյունքում քրեակատարողական ծառայողների գործողություններում կարգապահական խախտումներ չեն հայտնաբերվել, 1-ը կասեցվել է, մյուսի արդյունքում 1 ծառայողի նկատմամբ միրառվել է կարգապահական տույժ: Նույն ժամանակահատվածում արգելված իրերի, այդ թվում՝ բջջային հեռախոսների հայտնաբերման արդյունքում քրեակատարողական հիմնարկների կողմից անցկացվել է 4 ծառայողական քննություն, որից 1-ը կասեցվել է, 2-ի արդյունքում քրեակատարողական 2 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, 1-ի արդյունքում քրեակատարողական ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել: Այլ արգելված իրերի հայտնաբերման արդյունքում անցկացվել է 7 ծառայողական քննություն, որից 2-ը դադարեցվել է, 1-ը կասեցվել է, 2-ի արդյունքում քրեակատարողական 3 ծառայողի նկատմամբ կիրառվել է կարգապահական տույժ, 2-ի արդյունքում քրեակատարողական ծառայողների կողմից թույլ տրված կարգապահական խախտման հատկանիշներ չեն հայտնաբերվել: